

Քաղվածք

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումից

Երևան, 28 հունիսի 2019թ.

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը դատախազների թեկնածությունների ցուցակում համալրում կատարելու համար՝ անցկացնելով փակ մրցույթ, 2019թ. հունիսի 28-ի նիստում քննարկեց Ա. Մ.-ի վերաբերյալ եզրակացություն տալու հարցը:

Հաշվի առնելով ստուգման արդյունքները և ղեկավարվելով ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 26-ի թիվ 43 հրամանի N 1 հավելվածի 26-րդ կետով և ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածի 7-րդ կետի 9-րդ ենթակետով, Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ՝

Դրական եզրակացություն ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ Ա. Մ.-ին դատախազների թեկնածությունների և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու վերաբերյալ: